ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Սահմանադրության հրապարակ, 1 շենք, ☎ (+374 223) 2 36 63, 2 37 13, էլ. փոստ kotayk@mta.gov.am

03.09.2025թ. № 02/10.1/08369-2025

«ՍՊՈՐՏ ԻՆՍԱՅԹ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ ԱՆԱՀԻՏ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝
Ք.ԵՐԵՎԱՆ ՆԱՐ-ԴՈՍ 77/70,
ԷԼ. ՀԱՍՑԵՆ՝ anahit.tovmasyan.67@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ
(Պայմանագրի միակողմանի լուծման մասին)

Հարգելի տիկին Թովմասյան

Տեղեկացնում ենք, որ 05.08.2025թ. № 02/10.1/07403-2025 գրությամբ ներկայացվել է «Սպորտ Ինսայթ»՝ ՍՊԸ-Ի և ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի միջև 12.02.2025թ. «ԿՈՏ-ՀՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/1» ծածկագրով կնքված պայմանագրին կից համաձայնագրի նախագիծը, որով առաջարկվել է մինչև 22.08.2025թ կնքել և ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմ ներկայացնել համաձայնագրի կնքված տարբերակը, սակայն այն չի ներկայացվել: Համաձայն պայմանագրի 8.5 և 8.15 կետերի՝ կողմերը պարտավորվում են կնքել համաձայնագիր մատակարարման ժամանակացույցի և վճարման ժամանակացույցի վերաբերյալ: ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմը համաձայնագրի նախագիծը ընկերությանը ծանուցել է՝ 05.08.2025թ.,որը ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի 2-րդ մասի համաձայն պետք է կնքվեր 15 աշխատանքային օրվա ընթացքում, որը Ձեր կողմից չի կատարվել: Այնուհետև ևս 2 անգամ ծանուցվել եք ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմի կողմից, սակայն մինչ օրս չեք կատարել Ձեր պարտականությունը: Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմը, հիմք ընդունելով 12.02.2025թ. «ԿՈՏ-ՀՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/1» ծածկագրով կնքված պայմանագրի 8.15 կետը, 2025 թվականի սեպտեմբերի 04-ից ամբողջությամբ և միակողմանի լուծում է վերոնշյալ պայմանագիրը և ընկերության շնորհված 21, 29 և 62 չափաբաժինները:

Միաժամանակ տեղեկացնում եմ Ձեզ,որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 17-րդ ենթակետի դ) մասի և Ձեր կողմից ներկայացված պայմանագրի ապահովման՝ 152 000 (մեկ հարյուր հիսուներկու հազար) ՀՀ դրամ գումարի չափով և որակավորման ապահովման՝ 228 000 (երկու

հարյուր քսանութ հազար) ՀՀ դրամ գումարի չափով, տուժանքի համաձայնագրերի 1.6 կետի համաձայն տուժանքի համաձայնագրերը և կից պահանջագրերը կներկայացվեն Ձեր ընկերությանը սպասարկող բանկին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հարկ ենք համարում նաև նշել, որ համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ պայմանագիրը ամբողջությամբ և միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում:

03.09.2025

X

ԼԵՎՈՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Подписано: PETROSYAN LEVON 1201620333

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԼԵՎՈՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ֆինանսական վարչության պետ՝ Համլետ Ստեփանյան
Կատարող՝ հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ՝ Թերեզա Մաթևոսյան հեռ. /0223/ 2-64-32